

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ
ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

Հանձնման ամսաթիվ – 09/06/2014

Հաստատման ամսաթիվ -15/07/2014

Ենթաձրագիր X

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

L2860-ICB-1-10/1

ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ



ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ
ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

Ենթաձրագիր X

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

L2860-ICB-1-10/1

ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔ

Գիրք X.1.3

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

ՀԳՇՆ ՍՊԸ տնօրեն

Վ. Հովասափյան

Բնապահպան

Ք. Սահակյան



Երևան,
հունիս, 2014թ.



Ենթաձրագիր X

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

L2860-ICB-1-10/1

ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

- Գիրք X.1.1 - Ընդհանուր դրույթներ և բացատրական մաս
- Գիրք X.1.2 - Տեխնիկական մասնագրեր
- Գիրք X.1.3 - Շրջակա միջավայրի կառավարման պլան
- Գիրք X.1.4 - Աշխատանքային գծագրեր
- Գիրք X.1.5 - Աշխատանքային ծավալներ
- Գիրք X.1.6 - Նախահաշիվներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 6
- 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 6
- 3. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 6
- 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ..... 8
 - 4.1 Ջրամատակարարման գոյություն ունեցող համակարգերի նկարագրություն..... 8
 - 4.2 Առաջարկվող վերականգնման աշխատանքների նկարագրությունը..... 8
- 5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 10
 - 5.1 Թալին քաղաքի աշխարհագրական դիրքը և կլիմայական պայմանները..... 10
 - 5.2 Կենսաբազմազանությունը..... 10
- 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11
- 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 12
- 8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ... 15
- 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17
- 10. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ. 18
- 11. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ..... 20

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 21
- ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿՈՆԿՐԵՏ ՏԵՂԱՄԱՍԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 23
- ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ 25
- ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆ 30
- ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԶԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ /ԶԳԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ /
ՎԹԱՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ 31
- ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ / ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄՈՆԻՏՈՐՆԳԻ ՁԵՎԱԹԵՐԹ .. 32
- ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ 33

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆ - Աշխատանքային նախագիծ

ԲԿՊ - Բնապահպանական կառավարման պլան

ԿՏ ՇՄԿՊ - Կոնկրետ տեղամասի շրջակա միջավայրի կառավարման պլան

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՀ ԲՆ - ՀՀ Բնապահպանության նախարարություն

ՀՀ ԱՆ - ՀՀ Առողջապահության նախարարություն

ՀՀ Տ և ԿՆ - ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն

ՀՀ ՄՆ - ՀՀ Մշակույթի նախարարություն

ՀԶ - Համատեղ ձեռնարկություն

ՀԶԿ ԱԶԲ ԾԿԳ - Հայջրմուղ կոյուղի ՓԲԸ-ի Ասիական զարգացման բանկի ծրագրի
կառավարման գրասենյակ

ՇՄԱԳ - Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՇՄԿՊ - Շրջակա միջավայրի կառավարման պլան

ՋԶՄԾ - Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր

ՋՄԿ - Ջրի մաքրման կայան

ՍԹԱ - Սահմանային թույլատրելի արտանետում

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին

ՏՎԸ - Տեխնիկական վերահսկողություն իրականացնող ընկերություն

ՕԿԶ - Օրվա կարգավորման ջրամբար

1. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

ՋնՋ համակարգերի բարելավման ծրագրի իրականացումը հնարավորություն կտա 18 քաղաքներում և 92 գյուղերում ապահովել մոտ 400,000 սպառողների (տնային տնտեսությունների և այլ սպառողների) անվտանգ, հուսալի և կայուն ջրամատակարարումը, բարելավել հանրային առողջությունն ու շրջակա միջավայրը: Ծրագրի արդյունքում բնակչության համար պետք է մատչելի դառնան անվտանգ, հուսալի և կայուն ՋնՋ ծառայությունները և վերջիններս պետք է կառավարվեն առևտրային սկզբունքներով ու էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով:

Ծրագիրը կազակցի նաև աղքատության կրճատմանը՝ (i) նվազեցնելով ջրով փոխանցվող հիվանդությունների դեպքերի թիվը և բուժօգնության ծախսերը, (ii) ազատելով կանանց ժամանակը պահանջող տնային աշխատանքից՝ հեռու տարածքներից ջուր բերելուց և ջուր հավաքելուց, ինչը թույլ կտա նրանց ավելի շատ մասնակից լինել սոցիալական և տնտեսական գործունեությանը, (iii) ապահովել անվտանգ, ավելի հուսալի և կայուն ջրամատակարարում, և (iv) ծրագրի բոլոր քաղաքներում և գյուղերում բարձրացնել տնտեսությունների կյանքի որակը:

Ինչպես և ՋնՋ առաջին ծրագիրը, լրացուցիչ ֆինանսավորման ծրագիրը նույնպես ֆինանսավորում է ծրագրի երկու բաղադրիչներ. (I) քաղաքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում, և (ii) կառավարման բարելավում և զարգացում, ներառյալ գենդերային առանձնահատկությունները:

2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ըստ ԱԶԲ Բնապահպանական քաղաքականության (2002թ.), ենթածրագիրը դասակարգվում է Բ կարգի, որը կարիք չունի ընդլայնված ՇՄԱԳ-ի, ինչպես նաև բնապահպանական փորձաքննության, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (20 նոյեմբերի, 1995 թ.) և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա գործունեությունների սահմանային չափերի մասին» ՀՀ կառավարության որոշման (N-193, 30 Մարտի 1999):

Որպես Բ կարգի ծրագիր, ԱԶԲ քաղաքականությունը պահանջում է յուրաքանչյուր ենթածրագրի համար Նախնական բնապահպանական գննության (IEE) հաշվետվությունների և տվյալ տեղանքի համար առանձնահատուկ բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) մշակում (առանձին հաշվետվություն յուրաքանչյուր ենթածրագրի համար):

3. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավման փաթեթի համար, որի նախագծումը կատարվել է ՀԳՇՆ և ՋԻՆՋ ՍՊԸ-ների միավորման պայմանագրով: Այս համայնքում ջրամատակարարման համակարգերի վերականգնումը ներառում է գոյություն ունեցող ՕԿՋ-ների, ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում, նոր ջրագծերի, փականային հանգույցների, բազմաբնակարան շենքերի և անհատական տների ջրաչափական հորերի կառուցում և վերակառուցում:

Շինարարական աշխատանքների, ինչպես նաև հետագայում ջրամատակարարման համակարգի շահագործման ու պահպանման ընթացքում կարող են լինել անցանկալի բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա:

Կանխատեսվում է, որ շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կլինեն նվազագույնը և կկրեն ժամանակավոր բնույթ: Դրանք կարող են ներառել բուսականության հատումը, հողի էրոզիան, օդի աղտոտումը, ինչպես նաև հողային ու ջրային ռեսուրսների աղտոտումը քայուղեքով, քլորի միացություններով, կենցաղային ու շինարարական աղբով:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կարող են նվազել՝ կապված շահագործման կանոնների պատշաճ կերպով կատարելու հետ:

Շրջակա միջավայրի վրա դրական ազդեցություններից էականը ջրային ռեսուրսների պահպանությունն է և կայուն օգտագործումը:

Ջրամատակարարման համակարգերի բարելավման սոցիալական և տնտեսական ազդեցությունը մեծ մասամբ դրական է՝ խմելու և ոռոգման, կոյուղու կեղտաջրերի խառնման բացառում, ջրերի աղտոտման վտանգի նվազում, խմելու ջրում վարակիչ հիվանդությունների հարուցիչների ներթափանցման կանխում և բացառում, ջրամատակարարման տևողության ավելացում, կայուն ջրօգտագործման ապահովում, ջրի արդյունավետ սպառում:

Ստորև բերվում են ջրամատակարարման համակարգերի բարելավման ծրագրի իրականացման տարբեր փուլերում հնարավոր բացասական ազդեցությունների և անհրաժեշտ մեղմացնող միջոցառումների նկարագրությունները:

➤ **Նախագծային փուլ**

Ջրային համակարգերի նախագծային աշխատանքները կատարվել են ՀԳՇՆ և ՋԻՆՋ ՄՊԸ-ների միավորման կողմից, որն ընտրվել է որպես ԱԶԲ “Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի նախագիծ՝ լրացուցիչ ֆինանսավորում” ծրագրի ինժեներական նախագծերի խորհրդատու: Նախագծային փաստաթղթերը ներառում են բնակավայրերի կլիմայական պայմանները, ռելիեֆը, բնահողի տեսակները, ջրաբանությունը, բուսականությունն արտացոլող հողվածներ, ինչպես նաև ՀՀ ԲՆ և այլ նախարարություններից անհրաժեշտ թույլտվություններ ձեռք բերելու պահանջները: Դրանք ներառում են նաև համապատասխան բնապահպանական ու սոցիալական հողվածներ: Նախագծային փաթեթում ներառված են նաև սույն փաթեթի ՇՄԿՊ-ն և կոնկրետ տեղամասի ՇՄԿՊ-ն: Նախագծի խորհրդատուն պարտավոր է հետևել ՀՀ բնապահպանական և սոցիալական օրենսդրության համապատասխան դրույթներին, ինչպես նաև ԱԶԲ ուղեցույցներին ու ռազմավարություններին, որոնք նշված են Պայմանագրում:

➤ **Շինարարության փուլ**

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը մեղմացնող անհրաժեշտ միջոցառումների ցանկը բերված է ՇՄԿՊ աղյուսակում ([Հավելված 1](#)):

➤ **Շահագործման փուլ**

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար այն պետք է իրականացվի ըստ ջրամատակարարման համակարգի շահագործման կանոնների ու նորմերի:

Շինարարության փուլում շահագործումը պետք է իրականացվի Շահագործման կանոնների ու ստանդարտների համաձայն:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Ջրամատակարարման գոյություն ունեցող համակարգերի նկարագրություն

Թալին քաղաքը սպասարկվում է ՀՋԿ ՓԲԸ կողմից: Քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է Կարմրաշենի և Կենտաղբյուրի աղբյուրակապերից ինքնահոս համակարգերի միջոցով:

Կարմշարենի աղբյուրները, որոնց ընդհանուր ելքը կազմում է 10լ/վ, գտնվում են համանուն գյուղի հյուսիս-արևելյան մասում, Թալին քաղաքից մոտ 13կմ հեռավորության վրա: Այստեղից ջուրը տեղափոխվում է դեպի քաղաքի ՕԿՁ-ներ 150մմ տրամագծի թուջե խողովակաշարով: Կարմրաշեն աղբյուրներից դեպի հարավ՝ մոտ 3կմ հեռավորության վրա, գտնվում է Կենտաղբյուրի սանիտարական գոտին՝ իր երկու աղբյուրակապերով, որոնց ընդհանուր ելքը կազմում է 20լ/վ:

Ջրաղբյուրներից տեղափոխվող ջրաքանակը վարակազերծվում է Թալինի ՕԿՁ-ների տարածքում գտնվող քլորակայանում:

Թալին քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցը սպասարկվում է 2500մ³ ընդհանուր ծավալով 4 ՕԿՁ-ների (2x1000մ³ և 2x250մ³) միջոցով: ՕԿՁ-ները սնում են քաղաքի գրեթե բոլոր թաղամասերը, բացառությամբ Միրոյան թաղամասի, որը սնվում է անմիջապես մայր ջրատարից (թաղամասի մի քանի տնային տնտեսություններ ջուրն օգտագործում են առանց վարակազերծման): Քաղաքը սպասարկող բոլոր ՕԿՁ-ները գտնվում են ցանկապատով սահմանափակված միևնույն սանիտարական գոտու տարածքում: ՕԿՁ-ների սանիտարական գոտին խնամված է և բարեկարգ:

ՕԿՁ-ներից դուրս եկող ջրագծերը միանում են ցանկապատի մոտ կառուցված բաժանարար հանգույցում: Այստեղից ջուրը տրվում է բաշխիչ ցանց և առանձին ջրագծերով բաշխվում ըստ թաղամասերի:

Թալին քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցը կառուցվել է 1960-ական թվականներին և իրականացված է թուջե և պողպատե խողովակներից: Բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 17 կմ, որն ամբողջությամբ վթարային վիճակում է: Հոսակորուստների պատճառով ջրամատակարարումն իրականացվում է գրաֆիկով: Ջրամատակարարման բաշխիչ ցանցը գոտիավորված չէ:

Թալին քաղաքում ԱԶԲ նախորդ ծրագրով կառուցվել են մոտ 4.5կմ պոլիէթիլենե ջրագծեր և տեղադրվել 207 ջրաչափական հորեր: Սակայն դա չի լուծել համայնքի ջրամատակարարման խնդիրները և ներկայումս այն բարելավելու անհրաժեշտություն կա:

4.2 Առաջարկվող վերականգնման աշխատանքների նկարագրությունը

Ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով Թալին քաղաքի աշխատանքային նախագծով առաջարկվել են հետևյալ միջոցառումները.

- 2x1000մ³ և 2x250մ³ տարողությամբ ՕԿՁ-ների վերանորոգում:
- քլորակայանի վերանորոգում,

- L=21400,0 մ ընդհանուր երկարությամբ de50-de160 տրամագծի խողովակների վերակառուցում և կառուցում՝ պոլիէթիլենե խողովակներով:
- 49 բազմաբնակարան շենքերի և հասարակական նշանակության օբյեկտների մուտքագծերի փոխարինում:
- 650 անհատական տների մուտքագծերի փոխարինում՝ ջրաչափական հորերի տեղադրմամբ:
- Ջրամատակարարման (6 հատ) և հիդրանտային հորերի (5 հատ), թաղված փականային հանգույցների (60 հատ) կառուցում և վերակառուցում:
- Թալին քաղաքի բոլոր տնային տնտեսությունները կստանան վարակազերծված խմելու ջուր

Այս փաթեթի շրջանակներում իրականացվող աշխատանքներն ամփոփ ներկայացված են աղյուսակ 1-ում:

Իրականացվող աշխատանքների ամփոփ նկարագիրը

Աղյուսակ 1

Աշխատանքներ	Չ/Մ	ք. Թալին	Ընդամենը
ՕԿՋ-ների վերանորոգում	մ ³	2500	2500
Քլորակայանի վերանորոգում	հատ	1	1
Ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցում de50-de160 տրամագծի խողովակներով, փորձարկում, լվացում, ախտահանում	զծմ	21400	21400
Անհատական տների մուտքագծերի կառուցում՝ ջրաչափական հորերի տեղադրմամբ	հատ	650	650
Բազմաբնակարան շենքերի և հասարակական օբյեկտների մուտքագծերի փոխարինում	հատ	49	49
Ջրամատակարարման և հիդրանտային հորերի կառուցում ,վերակառուցում	հատ	11	11
Թաղված փականային հանգույցների կառուցում	հատ	60	60

Սույն ԱՆ-ով ասֆալտապատ և բարեկարգ վիճակում գտնվող փողոցներով ջրագծերի անցկացումից հետո խրամուղիների վերականգնվող ծածկույթը նախատեսվում է իրականացնել նույն որակով (տես՝ Ընդհանուր դրույթներ Գիրք X.1.1):

Բոլոր այն ջրագծերի խրամուղիներում, որտեղ ավազե պաշտպանիչ շերտի վրա ետլիցքը իրականացվում է ավազով, նախատեսված է պոլիէթիլենե ցանցավոր ազդանշանային ժապավենի փռում խողովակի վերին շուրթից 30.0սմ բարձրության վրա՝ խրամուղու ամբողջ երակարությամբ:

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Թալին քաղաքի աշխարհագրական դիրքը և կլիմայական պայմանները

Արագածոտնի մարզի դիտարկվող համայնքը տեղադրված է Արագած լեռնազանգվածի հարավային փեշերին, Արտենի լեռան մոտ: Ծովի մակարդակից ունի 1585մ բարձրություն: Թալին քաղաքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից շուրջ 70 կմ է, իսկ մարզկենտրոն Աշտարակ քաղաքից՝ 48 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Թալին քաղաքին բնորոշ է չափավոր ցամաքային կլիման: Ձմեռները ցուրտ են, հաստատուն ձնածածկույթով: Ամառները շոգ են: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է +23-ից+25°C միջակայքում: Առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել +34°C: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է -14-ից-25°C միջակայքում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը կազմում է 400-450 մմ: Քամիների գերակշռող ուղղությունը հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են:

Բնական լանդշաֆտները չոր տափաստաններ են: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաէրոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը:

Երկրաշարժների հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9բալ, իսկ առավելագույն հորիզոնական արագացումը՝ 0,4g :

5.2 Կենսաբազմազանությունը

Բուսական աշխարհ: Թալինի տարածաշրջանին բնորոշ չոր տափաստանային և տափաստանային լանդշաֆտային գոտիներում տարածված են շագանակագույն կամ լեռնային սևահողերը: Լեռնային տափաստանների բուսատեսակները հիմնականում ներկայացված են փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*) ֆորմացիաներով: Լայնորեն տարածված են տրագականտները, տափաստանային թփերից գերակշռում են ասպիրակի (*Spiraea*), սխի ժայռի (*Spiraea, A.rupestre*) և ոգնաթուփի (*Acantholimon*) տեսակները:

Բարձր լեռնային մասերում տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ: Տարախոտային մարգատափաստանների տեսակները հանդիպում են տարբեր թեքության լանջերին և հանդես են գալիս աովույտի (*Medicago L.*) և երեքնուկի (*Trifolium L.*) ցեղի տեսակներով:

Տարածաշրջանում անտառածածկույթը բացակայում է: Բուսածածկում տեղ-տեղ հանդիպում են՝ բարդի (*Populus*), ակացիա (*Robinia*), թխկի (*Acer*), թթենի (*Morus*), վայրի ծիրանենի (*Armeniaca*), սովորական և սրապտուղ հացենի (*Fraxinus excelsior, F.oxycarpa*), փշատենի (*Elaeagnus*), ուռենի (*Salix*), մասրենի (*Rosa*):

ՀՀ բույսերի Կարմիր Գրքում գրանցված տեսակներից Թալինի մերձակայքում հանդիպում է միայն Խլոպուզ Գրոյտերին (*Merendera greuteri* Gabrielian -CR):

Կենդանական աշխարհ: Նկարագրվող տարածքում կաթնասունների տեսակներից հանդիպում են նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*) և մի շարք կրծողներ: Երկկենցաղներից և սողուններից հանդիպում են դոդոշների, գորտերի,

մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ, անողնաշարավոր կենդանիներից՝ մորեխների (Oedopoda coeruleascensd, Oe. Miniata, Pholidoptera), ծորիդների (Phytodrymadusa armeniaca) տեսակներ, երկթևանիներ (Tomomyza araxana, Bombilus schelkovnikovi):

Թռչուններից առավել լայն տարածում ունեն ճնդուկանմանները (Passeriformes) և ճուռականմանները (Falconiformes):

Ենթածրագրի իրականացման տարածքում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Ենթածրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են միայն բնակավայրի տարածքում և ներառում են արդեն գոյություն ունեցող կառուցվածքների վերականգնման աշխատանքներ: Հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

Պատամաշակութային հուշարձաններ: Թալին քաղաքի վարչական տարածքում են գտնվում սբ. Կաթողիկե եկեղեցական համալիրը (IV-XX դար) և սբ. Աստվածածին եկեղեցին (VI դար), որոնք տեղակայված են քաղաքի հյուսիսում, ինչպես նաև “Մեծ Թալին” դամբարանադաշտը (մ.թ.ա. 4-3-րդ հզմ), որը գտնվում է քաղաքից 1.5-2կմ հեռավորության վրա՝ դեպի արևելք:

Վերականգնվող բոլոր ՕԿՋ-ները գտնվում են միևնույն սանիտարական գոտու տարածքում, որը սահմանափակված է ցանկապատով: Թեև դրանք տեղակայված են քաղաքի բնակելի տարածքում, սակայն բավականին հեռու են վերոնշյալ եկեղեցական համալիրներից: Մոտակա բնակելի տունը գտնվում է ՕԿՋ-ների տարածքից նվազագույնը 500մ հեռավորության վրա: Մոտակա շին. հրապարակը տեղակայված է եկեղեցիներից նվազագույնը 150մ հեռավորության վրա:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջրամատակարարման համակարգի վերականգնման աշխատանքների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ակնկալվում են հետևյալ դրական ազդեցությունները.

- ջրային ռեսուրսների պահպանություն և կայուն օգտագործում,
- խմելու և ոռոգման, կոյուղու կեղտաջրերի խառնման բացառում,
- խմելու ջրում վարակիչ հիվանդությունների հարուցիչների ներթափանցման կանխում, բացառում,
- խմելու ջրի աղտոտման վտանգի նվազում,
- խմելու ջրի բարձր որակի ապահովում,
- բնակչության առողջական վիճակի լավացում,
- ջրակորուստների կրճատում,
- բնակչությանը ջրամատակարարման տևողության ավելացում,
- ջրի հաշվառման համակարգի ներդրում,
- ջրի սպառման արդյունավետության բարձրացում:

Շրջակա միջավայրի նախնական գննությունը (ՇՄՆՋ) բացահայտել է, որ այս փաթեթով նախատեսված ՋնՋ համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման ժամանակ

բնակավայրերի լանդշաֆտների, շրջակա միջավայրի ու մարդկանց առողջության վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ:

Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել՝ շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Հիմնվելով նախնական գնահատման վրա կարելի է ակնկալել հետևյալ հնարավոր բացասական ազդեցությունները.

- օդի աղտոտում,
- աղմուկ,
- երթևեկելի ու հետիոտն ճանապարհների խաթարում և ծանրաբեռնվածություն,
- հողի էրոզիա և հողատարման գործընթացներ,
- շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական և կենցաղային աղբով,
- հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելիանյութով և քսայուղերով,
- ջրային և հողային ռեսուրսների աղտոտում քլորով:

Սակայն այս ազդեցությունները կլինեն ժամանակավոր, իսկ այս փաթեթով իրականացվող աշխատանքները նկատելի դրական ազդեցություն կունենան բնակչության սոցիալական վիճակի վրա: Արդյունքում անմիջականորեն կբարելավվի Թալին քաղաքի բնակչության կյանքի որակը՝ ապահովելով կայուն և հուսալի ջրամատակարարում և ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործում ավելի քան 6,5 հազար մարդու համար:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Թալին քաղաքում ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների հետ կապված շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա վնասակար ազդեցություն հնարավոր է (i) ջրագծերի խրամուղիների, (ii) կարգավորիչ ու ջրաչափական հանգույցների փոտրակների շինարարության (iii) ՕԿՁ-ների և քլորակայանի վերանորոգման ժամանակ:

Հողի էրոզիան ու հողատարման պրոցեսները կանխելու նպատակով ջրագծերի անցկացման թեք տեղանքում պետք է իրականացնել թեքությունները պահպանող միջոցառումներ, նվազագույնի հասցնելով ջրագծերի խրամուղիները, ինչպես նաև կարգավորիչ ու ջրաչափական հանգույցների համար փոտրակները բաց թողնելու ժամանակը:

Գետի և նրանց վտակների հուներին մոտ տեղամասերում հողատարումն ու ինտենսիվ կողային էրոզիան կանխելու նպատակով իրականացնել թեքությունները պահպանող միջոցառումներ:

- Շինարարական աշխատանքներն ավարտից հետո բոլոր աշխատանքային տեղանքները մաքրել շինարարական աղբից և բերել նախնական տեսքի,
- Բարեկարգ վիճակում գտնվող ասֆալտբետոնե ծածկույթներով բանուկ փողոցներում վերականգնել ասֆալտ*-բետոնե ծածկույթը նույն որակով,

- Քայքայված և կիսաքանդ վիճակում գտնվող ասֆալտբետոնե, ինչպես նաև գրունտային ծածկույթով փողոցներում փողոցներում վերականգնել խճի շերտ՝ տոփանումով:

***Օանդթագրություն.** Ասֆալտը ձեռք կբերվի մասնագիտացված ասֆալտի գործարանից, որը պատասխանատու է շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմացման միջոցառումների իրականացման համար: Բոլոր ասֆալտի գործարանները գործում են ՀՀ բնապահպանական օրենսդրության համապատասխան:

Հողի վերին շերտի կամ լանդշաֆտի ղեգրադազիան կանխելու նպատակով հողի վերին շերտը տեղափոխել և պահպանել հատուկ տարածքում, հետագայում վնասված տարածքները վերականգնելու համար: Շին. հրապարակը մաքրել շինարարական ու կենցաղային աղբից, լանդշաֆտը բերել նախկին տեսքի:

Հողային և ջրային ռեսուրսների աղտոտումը վառելանյութերից ու քսայուղերից կանխելու համար վերջիններս պահել/ամբարել հողային ու ջրային ռեսուրսներից մեկուսացված վայրերում՝ հատուկ բաքերում: Օգտագործված քսայուղերի հավաքման համար նախատեսել հատուկ տարողություններ, որոնք հետագայում հեռացվեն հատուկ տեղադրման վայրեր կամ վերամշակման համար հատկացված տեղանքներ:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու նպատակով դրանք տեղափոխել համայնքի համապատասխան աղբավայր՝ նախապես պայմանգիր ունենալով համայնքի ղեկավարության կամ աղբավայրը շահագործողների հետ: Խրամուղու փորման արդյունքում գոյացած ավելորդ գրունտն ու թափոնները տեղափոխել համայնքի համապատասխան տրամադրված վայր՝ նախապես թույլտվություն/պայմանագիր ունենալով համայնքի ղեկավարության կողմից/հետ:

Շինարարության յուրաքանչյուր փուլի ավարտից հետո Կապալառուն պետք է կազմակերպի շինարարական աղբի տեղադրում՝ այդ նպատակով հատկացված կուտակման տեղերում՝ ըստ սահմանված կարգի:

Ջրային և հողային ռեսուրսների քլորով աղտոտումը բացառելու նպատակով, ջրատարները և ջրամատակարարման բաշխիչ ցանցը քլորով լվանալու և ախտահանելու աշխատանքները կազմակերպել ըստ հաշվարկների: Ապահովել համապատասխան տեխնիկական հնարավորություններ: Խողովակների լվացումից հետո քլորի արտահոսքը դեպի մակենությային ջրային օբյեկտ կամ ցամաքային տարածք իրականացնել ըստ նախագծով նախատեսված ռեժիմի:

Ջրի որակի փոփոխություն: Շրջակա միջավայրի մոնիտորինգի պլանը պետք է ներառի նաև հսկողություն ջրի որակի և մնացորդային քլորի մակարդակի նկատմամբ:

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող փոշու ազդեցությունը նվազեցնելու համար պարբերաբար ջրել շինարարության տարածքը և պահել խոնավ վիճակում, որպեսզի քամու և մեքենաների աշխատանքի ժամանակ բացառվի փոշու առաջացումը:

Օդի աղտոտումը կանխելու նպատակով անհրաժեշտ է օգտագործել փակ/ծածկած բեռնատար մեքենաներ՝ փոշիացող շինանյութերի տեղափոխման ժամանակ: Եթե աշխատանքների ընթացքում հնարավոր չէ կանխել փոշու առաջացումը, ապա բանվորներին անհրաժեշտ է ապահովել պաշտպանիչ հարմարանքներով (շնչադիմակով):

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով բնակեցված տարածքներում սահմանափակել գիշերային աշխատանքը, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, իսկ անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

Կանոնավոր կերպով պետք է ստուգել շինարարական սարքավորումների վիճակը և թույլ չտալ աղմուկի գերազանցում նորմից: Աղմկահարույց սարքերով աշխատող բանվորներին անհրաժեշտ է ապահովել պաշտպանիչ հարմարանքներով (ականջակալներով):

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառած անհանգստությունը նվազեցնելու նպատակով տրամադրել ապահով տարածք բեռնատար մեքենաների համար, շինարարական ու կենցաղային աղբը չկուտակել և չայրել շինարարական հրապարակում: Շինարարությունն իրականացնել ըստ փուլերի, շինարարական աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններ տրամադրելով բնակչությանը, անհրաժեշտության դեպքում կարգավորել երթևեկությունը: Տեղադրել ճանապարհային նշաններ և անվտանգության ժապավեններ: Կազմակերպել շրջանցումների կամ պատնեշների տեղադրումը: Կտեղադրվեն անվտանգ կամրջակներ, ապահովելու այլընտրանքային ճանապարհներ և ժամանակավոր անցումներ դեպի տնային տնտեսություններ և այլ հասարակական օբյեկտներ: Այն տեղերում, որտեղ հավանական է բնակչության անց ու դարձ, ապահովել համապատասխան լուսավորություն: Տեղադրել հատուկ շրջանցումներ, ժամանակավոր անցումներ և կամրջակներ՝ մուտքը դեպի սբ. Աստվածածին եկեղեցի ապահովելու համար:

Շինարարության ժամանակ բնակչությանը և շինարարներին սպառնացող վտանգները կանխելու նպատակով ցանկապատել շինհրապարակը, վերահսկել չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ, վտանգավոր տեղերում տեղադրել նախազգուշացնող նշաններ, իրականացնել սարքավորումների պարբերական գնումներ որակավորված աշխատակիցների միջոցով, ինչպես նաև պարբերաբար անվտանգության աուդիտներ, շինարարների համար կազմակերպել առաջին օգնության և անվտանգության դասընթացներ:

Ապահովել համայնքի մասնակցությունը ենթածրագրի աշխատանքներին, ինչը կնվազեցնի համայնքի հասարակական կյանքին շինարարական աշխատանքների պատճառած անհանգստությունը:

Խմելու ջրի որակի փոփոխություն: Շրջակա միջավայրի մոնիտորինգի պլանը պետք է ներառի նաև հսկողություն ջրի որակի և մնացորդային քլորի մակարդակի նկատմամբ: Խմելու ջրի սանիտարահիգիենիկ անվտանգություն. Խմելու ջրի համար նախատեսված խողովակները պետք է ամուր փակվեն գնման պահից մինչև վերջնական մոնտաժման պահն ընկած ամբողջ ընթացքում:

Թալին քաղաքի խմելու ջրի որակը ապահովելու նպատակով ՀԶԿ-ն պետք է իրականանացնի պլանային նմուշառում համայնքը սնող ջրաղբյուրներից՝ ստուգելով Առողջապահության նախարարության կողմից պահանջված բոլոր պարամետրերը: Ջրի որակի մոնիտորինգ իրականացվում է նաև Առողջապահական պետական տեսչության կողմից, ըստ «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներակայացվող պահանջներ: Որակի հսկողություն № 2-III-Ա2-1 սանիտարական

կանոններ և նորմեր» (գրանցված է 28.12.2002թ), փաստաթղթի, որով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող պահանջները, ինչպես նաև արտադրվող ու բնակավայրերին ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները:

Քանի որ իրականացվում է խմելու ջրի վարակազերծում քլորով, ապա կարևոր է նաև խմելու ջրում քլորի մնացորդի մոնիտորինգը:

Վերը նշված բացասական ազդեցությունները նվազեցնելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում են մեղմացնող միջոցառումներ և մշակվել է Շրջակա միջավայրի կառավարման պլան՝ ՇՄԿՊ ([Հավելված 1](#)), ինչպես նաև կոնկրետ տեղամասի ՇՄԿՊ ([Հավելված 2](#)), որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող միավորները:

Շրջակա միջավայրի կառավարման պլանը (ՇՄԿՊ) հանդիսանում է շրջակա միջավայրի գնահատման փաստաթուղթ և ներառված է աշխատանքային նախագծերում:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

Առաջարկված մեղմացնող միջոցառումների իրականացման համար կազմակերպչական պարտավորությունները բաշխված են հետևյալ գործակալությունների միջև:

➤ ***Իրականացնող գործակալություններ, որոնք պատասխանատու են միջոցառումն իրագործելու համար:***

1. Այս առաջադրանքի համար, իրականացնող գործակալությունը նախագծային փուլում (ՀԳՇՆ և ՋԻՆՋ ՄՊԸ-ների միավորումը) պետք է ապահովի բոլոր անհրաժեշտ համաձայնությունների ու թույլատվությունների ձեռքբերումը համապատասխան պետական ու տեղական իշխանության մարմիններից՝ նախքան շինարարական աշխատանքները մրցութային կարգով բաշխելը:
 - բնապահպանական փորձաքննության եզրակացություն (անհրաժեշտության դեպքում),
 - պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության պետական գործակալության համաձայնություն, եթե նախագծով նախատեսվում է վերջիններիս վրա ազդեցություն:
2. Իրականացնող գործակալությունները շինարարության փուլում (շինարարության կապալառուներ) պատասխանատվություն են ստանձնելու ՇՄԿՊ-ով նախատեսված մեղմացման միջոցառումների ֆիզիկական իրականացման, ինչպես նաև շինարարական աշխատանքների կատարման հետ կապված բոլոր թույլատվությունների ու համաձայնությունների ստացման համար:
 - տեղական ինքնակառավարման մարմիններից թափոնների ու շինարարական աղբի տեղադրման սահմանված վայրերի վերաբերյալ համաձայնությունները,
 - պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության պետական գործակալության համաձայնությունը, եթե անսպասելիորեն հայտնաբերվում են պատմամշակութային կամ հնագիտական հուշարձաններ՝ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում:

3. Մինչև շինարարական աշխատանքների սկսելը ԱԶԲ ԾԿԳ-ի կողմից անհրաժեշտության դեպքում պետք է ձեռք բերվեն հետևյալ թույլտվությունները և վկայականները՝
- հողահատկացման վերաբերյալ կադաստրի վկայական,
 - անհրաժեշտության դեպքում ջրօգտագործման թույլտվություն:

➤ **Վերահսկող գործակալություններ, որոնք պատասխանատու են վերահսկել իրականացնող միավորներին՝ ապահովելու վերջիններիս կողմից ՇՄԿՊ պլանի միջոցառումների կատարումը:**

1. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ/ԱԶԲ ԾԿԳ-ի բնապահպանության մասնագետը պատասխանատու է աշխատանքներն ու միջոցառումները ՇՄԿՊ-ով և ԿՏ ՇՄԿՊ-ով նախատեսված հաջորդականությամբ ժամանակին, պատշաճ և հուսալի կատարելու համար: Նշված մասնագետը պարբերաբար ստուգայցեր կկատարի շինարարական տեղամասեր, որպեսզի ապահովի աշխատանքների և ազդեցությունների մեղմացմանն ուղղված համապատասխան միջոցառումների պատշաճ իրականացումը: Այցերի ընթացքում կվերհանվեն հնարավոր բացթողումները, ինչպես նաև կբացահայտվեն շինարարական կազմակերպության կողմից մեղմացման միջոցառումների իրականացման խախտումները՝ համաձայն «Դաշտային այցերի ստուգաթերթի» ([Հավելված 3](#)):

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ/ԱԶԲ ԾԿԳ-ն իրավունք ունի նաև պահանջել և ստուգել բոլոր թույլտվությունների առկայությունը և դրանց վավերականությունը (ժամկետանց չեն), շինարարության փուլում ՇՄԿՊ-ի հիմնովին կատարումը՝ ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և մոնիտորինգի մասով, ըստ ԱԶԲ-ի բնապահպանական ուղեցույցների և ըստ ՀՀ բնապահպանական ու սոցիալական օրենսդրության:

2. ՀԳՇՆ և ՋԻՆՋ ՄՊԸ-ների միավորման կողմից ևս կիրականացվի մեղմացնող միջոցառումների կատարման վերահսկողություն՝ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում: Բնապահպանության մասնագետը պետք է այցեր կատարի ՇՄԿՊ-ի և ԿՏ ՇՄԿՊ-ի կատարումը հսկելու նպատակով և գնահատի իրավիճակն ըստ «Արտանետումների/Շրջակայքի մոնիտորինգի ձևաթերթի» ([Հավելված 6](#)):

➤ **Պետական մոնիտորինգ իրականացնող գործակալություններ, որոնք պատասխանատու են ՇՄԿՊ-ի իրականացման աստիճանն ու ազդեցությունները մեղմացնող միջոցառումների արդյունավետությունը դիտարկելու և անհրաժեշտության դեպքում, ծրագրի մեջ ճշտումներ մտցնելու համար:**

Մոնիտորինգ իրականացնող պետական գործակալություններն են՝

- ՀՀ ԲՆ Պետական բնապահպանական տեսչությունը,
- ՀՀ Առողջապահության նախարարության Առողջապահական պետական տեսչությունը,
- անհրաժեշտության դեպքում, ՀՀ Մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունը,
- ՀՀ Տեղական ինքնակառավարման մարմինները,
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

ՇՄԿՊ-ում և ԿՏ ՇՄԿՊ-ում ընդգրկված բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված գումարները ներառված են աշխատանքային նախագծում:

Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների իրականացումը կվերահսկվի շին. հրապարակներ պարբերաբար այցելությունների միջոցով: Հատուկ մշակված ստուգաթերթիկի օգնությամբ կհայտնաբերվեն բացթողումներն ու թերությունները:

Մեղմացուցիչ միջոցառումների ոչ պատշաճ իրականացման կամ խախտումների դեպքում շինարարը կնախագգուշացվի, և այն չվերացնելու դեպքում կդադերեցվի հաջորդ վճարումը, մինչ խախտման ամբողջությամբ վերացումը:

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թալին քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման ենթածրագրի շրջանակներում բնակավայրերի շահառու և ազդակիր հանրությունն իրագրվել է և նախատեսվող աշխատանքների բնապահպանական ու սոցիալական ազդեցությունների վերաբերյալ:

Բոլոր շահառուների ներկայությունն ապահովելու նպատակով նախապես պայմանավորվածություններ են ձևափոխվել համայնքի ղեկավարի (քաղաքապետ), ջրմուղի աշխատակիցների, Արագածոտնի մարզում գործող ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Թալին քաղաքում հանդիպումը տեղի է ունեցել 05.06.2014թ. քաղաքապետարանում: Հանդիպմանը մասնակցել են քաղաքապետարանի և ջրմուղի աշխատակիցները, տեղի բժշկական հիմնարկությունների, դպրոցի և մանկապարտեզի աշխատակիցներ, տնային տնտեսուհիներ, տարեց բնակիչներ (ընդամենը 35 մարդ):

Հանդիպմանը ակտիվ մասնակցություն են ցուցաբերել հատկապես առավել խոցելի խավերի ներկայացուցիչները՝ կանայք ու տարեց բնակիչները, որոնց համար ջրամատակարարման համակարգերի բարելավումը կենսական նշանակություն ունի:

Մասնակիցներին ներկայացվել է աշխատանքային նախագիծը և նախատեսված աշխատանքները, որից հետո շրջակա միջավայրի մասնագետը ներկայացրել է շրջակա միջավայրին հասցվող հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք ամփոփված են ՇՄԿՊ-ում:

ՇՄԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ենթածրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Համայնքի բնակիչները հիմնականում իրենց մտահոգությունն են արտահայտել շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող հետևյալ հավանական խնդիրների վերաբերյալ.

- Բնակավայրում ավտոտրանսպորտի և բնակիչների երթևեկության խաթարում խրամուղիները երկար ժամանակ բաց պահելու հետևանքով, ինչպես նաև շինարարության ավարտից հետո ճանապարհների ոչ պատշաճ վերականգնման արդյունքում,

- Անվտանգության նշանների բացակայության և շինհրապարակը ժապավեններով չսահամանազատելու պարագայում վտանգավոր իրավիճակների ստեղծում բնակչության` հատկապես երեխաների ու ծերերի համար,
- Բնակավայրի աղտոտում շինարարական ու կենցաղային աղբով, շինարարության ընթացքում և շինարարությունից հետո չհեռացված շինաղբի առկայություն,
- Շինարարության ընթացքում երբեմն երկար ժամանակով (1-2 օր) համայնքի ջրազրկում,
- Նոր խողովակների ոչ պատշաճ լվացում և ախտահանում, ինչի արդունքում բնակիչները երկար ժամանակ կեղտոտ ջուր կունենան իրենց բնակարաններում:

ՇՄԿՊ-ն ներկայացնելուց հետո շրջակա միջավայրի մասնագետը խնդրել է Թալինի բնակիչներին մանրամասն ծանոթանալ ՇՄԿՊ-ին և շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ հետևել Պլանում տեղ գտած միջոցառումների իրականացմանը:

ՇՄԿՊ-ն բազմացվել է և բաժանվել հանդիպման մասնակիցներին, ինչպես նաև թողնվել է քաղաքապետարանում:

Քաղաքի կոնտակտային տվյալներ

ք. Թալին

քաղաքապետ` Սարգիս Արամյան

հեռ. (+374 249) 2 25 46

E-mail: talin.aragatsotn@mta.gov.am

Բնապահպանական խորհրդատվություններ



ք. Թալին

10. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության համար բողոքների ներկայացման մեխանիզմը մի գործընթաց է, որը հիմնականում ուղղված է ՋՋՄԾ մակարդակով ազդակիր համայնքների կողմից ծրագրի հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանը և լուծմանը: Բողոքների ներկայացման մեխանիզմը տարբերվում է վեճերի լուծման այլ ձևերից (օրինակ դատարաններ, վարչական համակարգեր, և այլն), այն

առաջարկում է խնդիրները կարգավորել տեղում հիմնված, պարզեցված և փոխշահավետ ճանապարհով, ՋՋՄԾ և համայնքի միջև հարաբերությունների շրջանակներում:

Բողոքների կառավարման պատշաճ նախագծված և իրականացվող գործընթացները կարող են օգտակար լինել թե՛ ՋՋՄԾ-ի և թե՛ համայնքների համար, ավելացնելով փոքր վեճերի արագ, էժան և արդար լուծման հավանականությունը այնպիսի լուծումների միջոցով, որոնք ողջամտորեն բավարարում են երկու կողմերին էլ, առանց բողոքները այլ (պաշտոնական) վեճերի լուծման մարմին տեղափոխելու: Բողոքների ներկայացման մեխանիզմները կարող են օգնել բացահայտելու և լուծելու խնդիրները, նախքան դրանք պաշտոնական վեճերի լուծման ավելի բարձր մակարդակի, այդ թվում՝ դատական կարգով լուծման մեթոդներին կհասնեն: Բողոքների ներկայացման մեխանիզմի արդյունավետ գործունեության համար կարևոր է սահմանել բողոքներին ընթացք տալու կառուցվածքը և բաշխել մեխանիզմի իրականացման պատասխանատվությունները և դրանք պարզաբանել շահագրգիռ կողմերին:

ՋՋՄԾ արտաքին շահագրգիռ կողմերից հարցերի, բողոքների ու առաջարկությունների համար կապ պահպանելու մանրամասները հետևյալն են.

Թեժ գիծ՝ 1 71 - ՀԶԿ Հաճախորդների աջակցության կենտրոն,
Ներդրումային ծրագրերի համակարգման վարչություն,
Լիլիթ Հովհաննիսյան, Բնապահպանական և սոցիալական ազդեցության մասնագետ

Հասցե 8ա Վարդանանց փակուղի, Երևան 0010, Հայաստան
Հեռ. / Ֆաքս՝ (+374 10) 542877
E-mail: lhovhannisyan@armwater.am

Հայջրմուղը կգրանցի բոլոր բողոքները: Գրանցման մատյանի ձևը բերված է [Հավելված 4](#)-ում:

Բողոքների ներկայացման մեխանիզմի ուշադրության կենտրոնացումը ազդակիր համայնքների կարիքների վրա հիմնավորվում է նրանով, որ դրանք անմիջականորեն, իսկ որոշ դեպքերում՝ զգալիորեն ազդեցություն են կրում ծրագրի իրականացման ընթացքում, սակայն հաճախ չունեն կենսունակ տարբերակներ կամ կարողություններ՝ իրենց մտահոգությունները այնպիսի պաշտոնական կառույցների միջոցով բարձրացնելու համար, ինչպիսիք են դատարանները: Մա, մասնավորապես, ճիշտ է համայնքների անապահով խավերի համար: ՋՋՄԾ-ը պետք է պարբերաբար վերանայի բողոքների ներկայացման գործընթացի համապատասխանությունը և համաձայնեցնի փոփոխությունները համայնքների մասնակցությամբ: Կապի տվյալների մանրամասները կտրամադրվեն շինարարության տեղեկատվական պաստառների վրա և տեղեկատվական թերթիկներում, որոնք տարածվում են ծրագրի հանրային խորհրդակցությունների ժամանակ: Հանրային հանդիպումների ընթացքում արտահայտված հարցերը և մեկնաբանությունները կգրանցվեն և կհասցեագրվեն ՋՋՄԾ նախագծման և իրականացման ընթացքում:

Բողոքների ներկայացման մեխանիզմը թույլ կտա, որպեսզի դիմողը բողոք ներկայացնի շինարարական աշխատանքների ժամանակ ցանկացած որոշման, պրակտիկայի կամ անհանգստության համար, որոնց վերաբերյալ անհամաձայնություն կա: Հանրային քննարկումների ընթացքում ազդակիրները լիովին տեղյակ կպահվեն իրենց իրավունքների և

բողոքների ներկայացման բանավոր և գրավոր ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև խորհրդատվության, հարցումների և փոխհատուցման ժամանակի վերաբերյալ: Սրան կարելի է հասնել, ապահովելով լիարժեք մասնակցություն և խորհրդատվություն ազդակիրների հետ, ինչպես նաև հաստատելով ակտիվ հաղորդակցություն և կոորդինացում տուժած համայնքների, ԾԿԳ-ի և քաղաքի կամ համայնքի ղեկավարների միջև: Բողոքների ներկայացման մեխանիզմը չի սահմանափակում գործը դատարան ներկայացնելու քաղաքացու իրավունքը բողոքի ներկայացման հենց առաջին փուլում:

11. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Շրջակա միջավայրի կառավարման պլանը, ինչպես նաև կոնկրետ տեղամասի շրջակա միջավայրի կառավարման պլանը հիմնված են այս ենթածրագրի ՇՄՆԶ-ի արդյունքների վրա և ներառում են բացասական ազդեցությունները մեղմացնող համապատասխան միջոցառումներ:

ՇՄԿՊ-ն բաղկացած է երկու բաղադրիչներից:

1. Մեղմացման միջոցառումները և իրականացնողների ինստիտուցիոնալ պարտականությունները:
2. Բնապահպանական մոնիտորինգ:

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա չկանխատեսված ազդեցություն առաջանալու դեպքում կլրացվի [Հավելված 5](#)-ում բերված աղյուսակը (Չկանխատեսված ազդեցություն/Նշանակալի իրադարձություն/Վթարի ծանուցում) և կկցվի փոփոխված պատվերներին:

Կապալառուն պետք է խստորեն հետևի ՇՄԿՊ-ով և ԿՏ ՇՄԿՊ-ով նախատեսված բնապահպանական մեղմացման միջոցառումների իրականացմանը: ՇՄԿՊ-ում ներառված բոլոր միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը ներառված են պայմանագրի ընդհանուր արժեքի մեջ:

Տեխնիկական վերահսկողություն իրականացնող ընկերությունը (ՏՎԸ) կամ Պատվիրատուն ՇՄԿՊ-ում ներառված միջոցառումների ոչ պատշաճ կերպով իրականացում հայտնաբերելու դեպքում, այդ մասին անմիջապես գրավոր պետք է ծանուցի Կապալառուին: Ծանուցում ստանալուց հետո հաջորդ խախտման գրանցումը գործի կոնի վնասի փոխհատուցման մեխանիզմը՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 0.1%-ի չափով: Վնասի փոխհատուցումը չի ազատի Կապալառուին խախտումները վերացնելու պարտականությունից: Արձանագրված խախտումները պետք է վերացվեն երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գնահատված վնասները կպահվեն հաջորդ կատարողականի վկայագրից, իսկ շինարարական աշխատանքների ավարտից հետո արձանագրված խախտումների գնահատված վնասները կպահվեն պահումի գումարից:

Երեք անգամ փոխհատուցման դեպքում Պայմանագիրը կարող է դադարեցվել միակողմանիորեն:

ՇՄԿՊ խախտման վերը նկարագրված ուղղիչ միջոցառումները կներառեն ՋնՋ ծրագրի ներքո ՀՋԿ-ի կողմից աշխատանքների ապահովման պայմանագրերում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Աշխատանքները և հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացման միջոցառումներ	Մոնիտորինգ	Պատասխանատու մարմիններ
Շինարարություն			
<p>1. Օղի աղտոտում, աղմուկ</p> <p>Շինարարության ժամանակ փոշի և աղմուկ</p>	<ul style="list-style-type: none"> - Ցանկապատել շինհրապարակը - Պարբերաբար ջրել շինհրապարակն ու ճանապարհները, - Բնակավայրերում սահմանափակել գիշերային աշխատանքները, - Խուսափել աղմկահարույց մեքենաների/սարքերի օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ, - Բեռնատարների համար ապահովել անվտանգ տարածք, - Շինհրապարակում չհավաքել ու չայրել աղբը, - Շինարարությունն իրականացնել փուլերով, աշխատանքների վերաբերյալ ծանուցելով բնակչությանը, - 	<p>Շին հրապարակի ամենօրյա սվերահսկում</p>	<p>Շինարար, Խորհրդատու, ԾԿԳ</p>
<p>2. Հողային ու ջրային ռեսուրսների աղտոտում</p> <ul style="list-style-type: none"> - Հողի էրոզիա և հողատարման պրոցեսներ - Շրջակա միջավայրի աղտոտում շինաղբով - Հողային ու ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութերով ու քսայուղերով 	<ul style="list-style-type: none"> - Ջրագծերի անցկացման թեք տեղանքում իրականացնել թեքությունները պահպանող միջոցառումներ, - Նվազագույնի հասցնել ջրագծերի խրամառիները, ինչպես նաև կարգավորիչ ու ջրաչափական հանգույցների համար փոստրակները բաց թողնելու ժամանակը, - Շինարարությունը հետո վերականգնել խախտված մակերեսները հնարավորիս սեղմ ժամկետում, ըստ նախագծի պահանջների, - Վառելանյութերը և քսայուղերը պահեստավորել մեկուսացված մակերեսի վրա՝ հողային և ջրային ռեսուրսներից հեռու տարածքներում, - Շին աղբը տեղափոխել համայնքի համապատասխան 	<p>Շինարարության պայմանագրի և շահագործման ամենօրյա սվերահսկում</p>	<p>Շինարար, Խորհրդատու, ԾԿԳ</p>

Աշխատանքները և հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացման միջոցառումներ	Մոնիտորինգ	Պատասխանատու մարմիններ
<ul style="list-style-type: none"> - Հողային ու ջրային ռեսուրսների աղտոտում քլորով 	<p>աղբավայր, նախապես ունենալով պայմանագիր համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողի հետ,</p> <ul style="list-style-type: none"> - Ջրամատակարարման բաշխիչ ցանցի ախտահանումը քլորով իրականացնել ըստ տեխնիկական հաշվարկների: Ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներ, - Խողովակների լվացումից հետո քլորի դեպի մակենության ջրային օբյեկտ կամ ցամաքային տարածք արտահոսքն իրականացնել ըստ սահմանված կարգի և ՄԹԱ-ի: 		
<p><i>3. Տրանսպորտի կուտակում</i></p> <ul style="list-style-type: none"> - Բնակչության անհանգստություն գերբեռնված ճանապարհների պատճառով 	<ul style="list-style-type: none"> - Համապատասխան ճանապարհային նշանների, պատնեշների տեղադրում, շրջանցումների կազմակերպում, - Շին. հրապարակներում անհրաժեշտության դեպքում ապահովել համապատասխան լուսավորություն, - Այն տեղերում, որտեղ հավանական է բնակչության անց ու դարձ, ապահովել լուսավորության ճիշտ տեղադրում: - Ապահովել բնակչության մասնակցությունը ենթածրագրի իրականացմանը, ինչը վազագույնի կհասցնի համայնքի հասարակական գործունեության խափանումը 	<p>Շին հրապարակի ամենօրյա սվերահսկում</p>	<p>Շինարար, Խորհրդատու, ԾԿԳ</p>
<p><i>4. Առողջություն և անվտանգություն</i></p> <ul style="list-style-type: none"> - Աշխատողների ու բնակչության համար ռիսկեր 	<ul style="list-style-type: none"> - Շին հրապարակը ցանկապատել, - Հսկել կողմնակի մարդկանց մուտքը շին հրապարակ, - Վտանգավոր վայրերում տեղադրել նախազգուշացնող նշաններ, - Պարբերաբար ստուգել սարքավորումները բարձրակարգ աշխատակիցների միջոցով, ինչպես նաև կանոնավոր կերպով իրականացնել անվտանգության ստուգումներ, - Կազմակերպել առաջին օգնության և անվտանգության դասընթացներ շինարանների համար: 	<p>Շինարարության ամբողջ փուլում ամենօրյա ստուգումներ: Պատահարների հաշվետվությունների և բողոքների գրանցման ամսական վերահսկում</p>	<p>Շինարար, Խորհրդատու, ԾԿԳ, Բնակչություն</p>

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿՈՆԿՐԵՏ ՏԵՂԱՄԱՍԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Թալին քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավում - I փաթեթ

ՀՀ	Շինարարական աշխատանքներ	Բացասական ազդեցություններ	Ռիսկի հավանականություն/արժեք	Ռիսկի հետևանք/արժեք	Ռիսկ/արժեք	Մեղմացնող միջոցառումներ
1.	Բնակավայրերի ներսում ՕԿՋ-ների, քլորակայանի, ներքին ցանցի կառուցում/վերակառուցում	Փոշի	Հավանական/5	Էական/3	15	- Պարբերաբար ջրել շինհրապարակն ու ճանապարհները
		Աղմուկ	Հնարավոր/3	Էական/3	9	- Բնակավայրերում սահմանափակել գիշերային աշխատանքները: - Խուսափել աղմկահարույց մեքենաների/ սարքերի օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:
		Տրանսպորտի ու հետիոտն ճանապարհների խաթարում	Հավանական/5	Էական/3	15	- Բեռնատարների և մասնագիտացված մեքենաների համար ապահովել անվտանգ տարածք: - Շինարարությունն իրականացնել փուլերով, աշխատանքների վերաբերյալ ծանուցելով բնակչությանը: - Տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ, որպես այլընտրանքային ճանապարհ ապահովել ժամանակավոր անցումների և կամրջակների կազմակերպումը, անվտանգության պատենշների տեղադրումը: - Շին. հրապարակներում ապահովել համապատասխան լուսավորություն: - Այն տեղերում, որտեղ հավանական է բնակչության անց ու դարձ, ապահովել լուսավորության ճիշտ տեղադրում:
		Շինարարական ու կենցաղային	Հավանական/5	Էական/3	15	- Շինհրապարակում չհավաքել ու չայրել աղբը: - Շին աղբը տեղափոխել համայնքի համապատասխան

ՀՀ	Շինարարական աշխատանքներ	Բացասական ազդեցություններ	Ռիսկի հավանականություն/ արժեք	Ռիսկի հետևանք/ արժեք	Ռիսկ/ արժեք	Մեղմացնող միջոցառումներ
		աղբ				<p>աղբավայր, նախապես ունենալով պայմանագիր համայնքի ղեկավարի/աղբավայրը շահագործողի հետ:</p> <ul style="list-style-type: none"> - Կենցաղային աղբը չխառնել շինարարական աղբի հետ և այն տեղադրել աղբարկղներում: - Բացառել շինարարական ու կենցաղային աղբի լցվելը գետերի ու նրանց վտակների մեջ:
		Աղտոտում վառելանյութերով ու քսայուղերով	Հնարավոր/3	Էական/3	9	<ul style="list-style-type: none"> - Վառելանյութերը և քսայուղերը պահեստավորել մեկուսացված մակերեսի վրա՝ հողային և ջրային ռեսուրսներից հեռու տարածքներում, - Պարբերաբար ստուգել կիրառվող սարքերի ու սարքավորումների տեխնիկական վիճակը
		Աղտոտում քլորով	Հավանական/5	Աղետալի/5	25	<ul style="list-style-type: none"> - Ջրամատակարարման խողովակների ախտահանումը քլորով իրականացնել ըստ տեխնիկական հաշվարկների: - Ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներ: - Խողովակների լվացումից հետո քլորի դեպի մակենութային ջրային օբյեկտ կամ ցամաքային տարածք արտահոսքն իրականացնել ըստ սահմանված կարգի և ջրային օբյեկտի ֆոնային կոնցենտրացիայի:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ

FIELD VISITS CHECKLIST

Դիտողություններ ստուգաթերթիկի լրացման վերաբերյալ /Comments on completing monitoring form

Իրականացված մեղմացուցիչ միջոցառումները	Mitigation implemented:
“Այո” = մեղմացման ծրագիրը իրականացվել է	“Yes” = mitigation program has been implemented
“Ոչ” = մեղմացման ծրագիրը չի իրականացվել	“No” = the mitigation program has not been implemented
“Ո/Կ” = Կիրառելի չէ	“N/A” = not applicable

Ընդհանուր տեղեկատվություն General information	Ամիս/ամսաթիվ DD/MM/YY				Corrective Action Request ուղղիչ միջոցառումների աստիճան
	Ենթածրագիր / Subproject				
	Տեղակայում / Location				
	Շին. կազմակերպություն/ Constriction contractor				
	Մարզ / Marz				
	Համայնք/ Community				
<u>1. Նախագծում</u> <u>Design</u>					
Անհրաժեշտ լսվություններ Required permissions	1.1 Բնապահպանական փորձաքննության եզրակացություն / EEC	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	1.2 Հողի ակտիվացման գրավոր համաձայնություն / written consent on land acquisition	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	1.3 Պատմամշակութային փորձաքննություն / assessment of impact on cultural heritage	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
<u>2. Շինարարություն</u> <u>Construction</u>					
Անհրաժեշտ թույլտվություններ Required permissions	2.1 Շին.թափոնների տեղադրման գրավոր համաձայնություն / written consent on disposal of construction waste	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	2.2 Կապալառուն ձեռք է բերել բնական ռեսուրսների հանութավորման թույլտվություն / Contractor holds license for extraction of natural resources	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	2.3 Կապալառուն ձեռք է բերել ասֆալտ/բետոնի գործարանի գործարկման թույլտվություն / Contractor holds permit for operating concrete/asphalt plant	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	2.4 Գրավոր համաձայնություն պատմամշակ. Հուշարձանի անսպասելիորեն հայտնաբերման դեպքում / written consent in case of sudden discovery of cultural heritage	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
<u>3. Հասարակության Իրազեկում</u> <u>Public awareness</u>					

	3.1 Արդյո՞ք շին.աշխատանքների վերաբերյալ բնակչության համապատասխան իրազեկում կատարվել է՝ համաձայն նախագծի / Is the awareness of population done by relevant notification regarding construction works according to the project design?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	3.2 Առկա՞ է համայնքի մասնակցություն շինարարական աշխատանքներին՝ համաձայն նախագծի / Is there community's participation in construction works according to the project design?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	3.3 Առկա է ցուցանակ, որն ապահովում է բողոքարկման մեխանիզմի լիարժեք գործելը՝ համաձայն նախագծի (պատասխանատու կազմակերպությունների կոնտակտային տվյալներ)։ / Are there notes providing proper operation of grievance redress mechanism according to the project design (contacts of responsible person/company)?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	3.4 Բողոքների գրանցման թերթիկում նշված բողոքը լուծում ստացել է ռոջամիտ ժամկետներում։/ The complaint stated in the Grievance Log was resolved in reasonable time period.	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
4.Անվտանգություն Safety					
Բանվորների անվտանգություն Safety of workers	4.1 Արդյո՞ք աշխատանքներն սկսելուց առաջ բանվորներն անցել են անվտանգության դասընթացներ / հրահանգավորում։ Առկա՞ է մատյան/ Did workers receive safety training before starting work - site induction? Is there journal?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.2 Արդյո՞ք բանվորներն ապահովված են անվտանգության հանդերձանքով/ առկա է (օր. բաճկոնակներ, սաղավարտներ, երկարաձիտ կոշիկներ, ձեռնոցներ, ակնոցներ, շնչադիմակ, այլ) Are safety uniforms available (eg. vests, helmets, high boots, gloves, glasses, mask)?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.3 Արդյո՞ք բնակավայրի տարածքում խրամուղիների վրա տեղադրված են կամրջակներ (հետիոտնի կողմից առավել ինտենսիվ օգտագործվող հատվածներում)/ Are there installed bridges on the trenches in residential areas (particularly the areas used by pedestrians intensively)?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.4 Վտանգավոր նյութերի հետ աշխատող բանվորները կրո՞ւմ են անվտանգության հատուկ հանդերձանք։ / Do workers dealing with hazardous materials wear special protective uniform?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.5 Սարքավորումները/մեխանիզմները կահավորվա՞ծ են արդյունավետ խլացուցիչներով։ /Are equipment fitted with effective silencers?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.6 Աղմուկի աղբյուրին մոտ աշխատող բանվորները կրո՞ւմ են արդյոք ականջակալներ։ Do workers in the vicinity of sources of high noise use ear-protection gear?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.7 Շինարարության մեջ ներառված տեխնիկական միջոցների պարբերական զննումներ կատարվո՞ւմ են՝ անվտանգությունն ապահովելու նպատակով / Are regular study of equipment used for construction for safety matter?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	

	4.8 Արդյո՞ք շին. հրապարակներում/ ճամբարներում առկա են առաջին բուժօգնության ցուցաբերման միջոցներ (դեղատուփ և այլն): / Is first aid kit available at the construction sites/ camps?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.9 Շինարարության մեջ ընդկրկված աշխատակազմի համար առաջին բուժօգնության ուսուցման կազմակերպվե՞լ է / Have First aid training organized for construction staff?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.10 Շինարարական հրապարակներում / ճամբարներում առկա՞ են արդյոք հակահրդեհային միջոցներ (հակահրդեհային վահան, կրակմարիչներ, գործիքներ/սարքավորում, ավազ և այլն): Are fire-resistant measures available on construction sites/ camps (fireproof shield, fire extinguisher, existence of tools/equipment, sand, etc.)?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.11 Վերջին ստուգայցից հետո պատահարի (եթե եղել է) մասին հաշվետվության ձև լրացվե՞լ է: / Has an incident (if any) report form been filled up after the last oversight?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
Բնակչության անվտանգություն Safety of population	4.12 Երթևեկության սահմանափակման կամ խախտման ժամանակ համապատասխան ճանապարհային նշաններ կամ պատնեշներ տեղադրվա՞ծ է, շրջանց կազմակերպվա՞ծ է / Are there installed road signs or fences, as well as organized bypass during interrupted or limited traffic?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	4.13 Արդյո՞ք փողոցային լուսավորություն ապահովվա՞ծ է, նաև այն հատվածներում որտեղ հավանական է անցորդների ելումուտը համապատասխան նշանների և լուսավորության ապահովում / Are there provided adequate street lighting, as well as proper signage and lighting in suitable places when passers-by or entry by public is likely?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
5. Շինարարության իրականացման ժամանակ կառավարման միջոցառումներ Management measures during construction					
Շին.հրապարակի/ տեղանքի շահագործում / Operation on area/construction site	5.1 Արդյո՞ք մեքենաների համար ապահով տարածք առկա է շին.հրապարակում / Is there available safe place at the construction site for vehicles?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	5.2 Արդյո՞ք յուղերի և քսուկների համապատասխան պահեստներ առկա են շին.հրապարակում / Are there available storage for oils and lubricants at the appropriate part of the construction site?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	5.3 Արդյո՞ք շինարարական հրապարակը/ճամբարը պատշաճ տեղադրված է (օր. ցանկապատ, հանդերձարան): / Is construction site/camp properly placed (ex. fencing, dressing room, etc.)?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	5.4 Արդյո՞ք շին. հրապարակներում/ճամբարներում առկա են շարժական զուգարաններ: / Is mobile toilet available at the construction sites/ camps?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	5.5 Արդյո՞ք շինարարական տեխնիկան և մեխանիզմները սարքին վիճակում են (վառելիքի, յուղերի և քսանյութերի արտահոսքի բացառում և այլն):/ Are construction machinery and equipment in order (prevention of leakage of fuel, oil, lubricants, etc.)?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	

	<p>5.6 Արդյո՞ք փորված, հանված, քանդված նյութերը և շինարարական ջարդոնները ժամանակին տեղափոխում են նախնական կուտակման վայրերից դրանց համար նախապես նախատեսված և համաձայնեցված վայրեր: Are excavated and demolished materials and construction waste timely removed from the places of preliminary accumulation and disposed to initially planned and agreed places?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	<p>5.7 Ապահովվա՞ծ են շինարարական հրապարակները աշխատող մարդկանց համար սանիտարահիգիենիկ պայմաններով: / Are workers at the construction site provided with proper sanitary and hygienic conditions?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	<p>5.8 Արդյո՞ք շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ շինհրապարակի / ճամբարի տեղակայման և թափոնների ժամանակավոր կուտակման համար նախագծով նախատեսված տարածքներից և օտարման գոտու սահմաններից դուրս բերրի հողերի և բնապահպանական տեսանկյունից խոցելի տարածքների օգտագործումը վերահսկվում է: / Is use of fertile lands or other environmentally sensitive areas located outside the easement zone and other than the areas envisaged in design for establishment of construction sites/camps and waste temporary accumulation sites during construction works overseen?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	<p>5.9 Արդյո՞ք վերահսկվում են վտանգված բուսական և կենդանական տեսակների առկայությունը շինարարական հրապարակում/ճամբարում: Do endemic species of flora and fauna exist in the area of construction site?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
<p>6. Օդի ժամանակավոր աղտոտում Temporary air pollution/dust</p>					
	<p>6.1 Շինանյութ տեղափոխող բեռնատարների վրա ծածկ օգտագործվո՞ւմ է / Are they using cover for the vehicles transporting construction waste?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	<p>6.2 Արվում է շինարարության տարածքի խոնավեցում ջրի շիթով / Are they moisturizing of the construction site by water?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
<p>7. Հողի էրոզիա Soil erosion</p>					
	<p>7.1 Արդյո՞ք գառիվար տեղերում հողի էրոզիայի կանխարգելման միջոցառումներ իրականացվել են ըստ նախագծի / Are there soil erosion prevention measures at the slope places according to the project design?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	<p>7.2 Արդյո՞ք փոստրակների հետլիցքը ժամանակին է կատարվել / Was the backfill of pits done timely?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	<p>7.3 Արդյո՞ք բուսահողը տեղափոխվել և պահեստավորվել է ըստ նախագծի: / Is the vegetative soil moved and stored according to the project design?</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	<p>7.4 Արդյո՞ք շին.աշխատանքների ավարտից հետո վնասված մակերեսները (մասնավորապես ուշադիր լինել բուսահողին) վերանորոգվել/ վերականգնվել/</p>	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	

	բարեկարգվել են ըստ նախագծի / Is the damaged surface restored/ repaired/developed after completion of construction works? (Pay special attention to the vegetative soil)				
8.Ջրի աղտոտում Water pollution					
	8.1 Արդյո՞ք ապահովված է, որպեսզի ջուրը չաղտոտվի քսանյութերով և վառելանյութերով / Is it provides the water is not polluted with fuel and lubricants?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	8.2 Արդյո՞ք խողովակների լվացումից հետո քլորի արտահոսքը համապատասխանում է նախագծով նախատեսված ռեժիմին / Is there leakage of chlorine after wash up of the pipes according to the scheduled regime?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
	8.3 Փոխադրամիջոցները և մեքենաները լվացվել են բնական ջրատարներից հեռու՝ կանխելով ջրի հոսքը անմիջապես դեպի ջրատարներ / Vehicles and machinery are washed away from natural water bodies in the way preventing direct discharge of runoff into the water bodies	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
9.Աղմուկ բնակավայրերի տարածքին մոտ Noise close to settlements					
	9.1 Արդյո՞ք աշխատանքներն իրականացվում են սահմանված աշխատանքային ժամերին, հակառակ դեպքում՝ սահմանված կարգով / Are the works implemented during working hours, otherwise in projected manner?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
10.Շինարարական և կենցաղային թափոնների տեղադրում Construction west disposal					
	10.1 Արդյո՞ք շինարարական և կենցաղային աղբի տեղափոխումն և տեղադրումը կատարվում է համայնքի համապատասխան աղբավայրում / Is transportation and disposal of construction and consumer waste done in appropriate community landfill?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	
11. Շահագործում Operation					
Խմելու ջրի աղտոտում / Drinking water pollution	11.1 Արդյո՞ք մնացորդային քլորի քանակը համապատասխանում է խմելու ջրի որակի նորմերին / Is the quantity of residual chlorine in compliance with the standards of potable water quality?	Այո Yes	Ոչ No	Ո/Կ N/A	

Այլ նշումներ/ պարզաբանումներ
Other remarks/ clarifications

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆ

Մարզ, Համայնք, Ենթածրագիր _____

Բողոքի հ/հ	Բողոքի ստացման ամսաթիվ	Բողոքի ներկայացման ձևը (անձամբ, հեռախոս, նամակ, ինտերնետ, այլ)	Բողոքի բնույթը (խնդրի նկարագրություն)	Ինչպես է լուծվել բողոքը / մեղմացող գործողություն	Բողոքի լուծման կարգավիճակ*	Բողոքարկողի կողմից հետևողականություն ցուցաբերվե՞լ է խնդրի լուծման ընթացի վերաբերյալ Այո / Ոչ	Նշումներ
1.							
2.							
3.							
4.							
5.							
6.							
7.							
8.							
9.							
10.							
11.							
12.							

*<Ընթացքում է> կամ <Լուծված է> (Եթե լուծված է, նշեք ամսաթիվը)

Գրանցված է ԾԿԳ-ի ՇՄ մասնագետի կողմից: _____

Ամսաթիվ: _____

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՉԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ /ԶԳԱԼԻ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ / ՎԹԱՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Իրադարձության օրը/վայրը	Իրադարձության նկարագիրը /Ազդեցությունը, ներառյալ ուժգնությունը և այդ ժամանակ ձեռնարկված վերահսկիչ գործողությունը	Հետևանքների գնահատում	Ուղղիչ գործողության պահանջ (ՈԻԳՊ), ներառյալ վերջնաժամկետը, և քաղված դասերը

Համատեղ ստուգրված է:

Տեղմասի տեխ. հսկողության ինժեներ: _____ Ամսաթիվ: _____

Կապալառու: _____ Ամսաթիվ: _____

Հավելվածներ:

(Օրինակ. Լուսանկարներ, լաբորատոր հաշվետվություններ, և այլն)

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ

PACKAGE X.I. TALIN TOWN

